

ՊԱՅՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Տարեկան գին Կ. Պոլսոյ 3 ՄԶԸ.
Վերջումս Կ. Պոլսոյ 4 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատուագ 5 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.
Պատուագ 5 ՄԶԸ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐՈՒՄ 7 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Որոշան լուրերուն կարևորագոյնն էր ինչ որ Հայաստանի գաղթականութիւնը և Պէրլինի Տէրութեանց խորհուրդին Հայոց խնդրոյն լաւ ու չափաւորութիւն չընելով, և Անգղիա՝ որ այնչափ կարևորութիւն կուտայ իւր Արևելեան շահուց, կարճատեւ աշխարհավարութիւն մը բռնելով, առանց զգալու թէ ո՛ր են իւր ստոյգ շահերն, Հայաստանի համար ապահովիչ բարենորոգումներ չտնօրինեցին, և ահա այս սխալանայ հետեւանքն եղաւ. ներկայ գաղթականութիւնը և Ռուսաց մեկնելէն անմիջապէս ետքն Եւրոպական յանձնարար հրդեհի մը միջոցաւ չափաւոր բարենորոգումներ ընելով՝ Հայերը գոհ և ապահով կրնային ըլլալ. բայց անոնց շահերը Պոլսոյ Հայերէնաց և մէկ երկու մեծ տէրութեանց զոհուեցան, որք իրենց մասնաւոր բաժինն ստանալով մնացեալը բնաւ հոգ չըրին։ Այսպէս հին ազգութեան մը մասերը Ռուսիոյ գերիւթ թողով, իւր հայրենեաց հետ ի միասին ազգութիւնն իսկ կորուսանելու և Ռուսանալու վտանգին մէջ ձգեցին։ Բ. Դուռն ևս սըխալանքե ազատ չէ, քանզի փոխանակ խաղաղ հպատակներ գոհ ընելու, անոնց՝ թշնամոյն բանակն անցնելուն հանգիստտես կը լինի։ Բայց այս ամենը չեն կրնար արդարացնել նաև գաղթականութեան թեթևամտութիւնն։ Իսլամներէ օմանք կրնան անվայել վարմանց մէջ գտնուիլ, և այս պիտի դէպքեր ամեն ժամանակ պակաս չեն։ Բայց չենք կարծեր որ իսլամաց մեծագոյն մասն այնչափ կորուսած ըլլայ ուղիղ դատողութիւնն ու ողջմտութիւնն, որ Ռուսաց մեկնելէն ետեւ ջարդ ընելու ելնէ, որուն առաջին առնչու համար կառավարութիւնն ամեն ճիգ պիտի թափէ հարկաւ։ Այս մասին Ս. Պատրիարք հայրը թէ՛ Բ. Դրան և թէ՛ դեռ ապահով ու չափաւորութիւն հրաւիրած է, որք հարկ եղած միջոցները կը խորհին և անյայտ պիտի գործադրեն։ Սըր Լէյարտի ներկայացուցած Ասիական բարենորոգմանց ծրագիրն այս օրերս Բ. Դրան կողմէն պիտի ընդունուի, և հարկաւ ասոր առաջին կէտերէն մին է ապահովութեան, և կենաց ու ընչից պահպանութեան հաստատութիւնը։ Այս պատճառաւ քանի մը միջնորդներու անմիտ սպառնալեաց ակնմը կախելով գաղթիւն ոչ միայն երկչոտութիւն՝ այլ և Հայոց ճշմարիտ շահերուն անգիտութիւն է։ Ըստ մեզ, ինչպէս արդէն ուրիշ անգամ ըսած ենք, Հայկական ճշմարիտ շահը կը պահանջէ որ Հայ ժողովուրդն իւր հայրենեաց մէջ մնայ, և հոն աշխատի իւր անձը պաշտպանելու և հոն ապագայն բարեօրոգելու, հոն ջանայ իւր իրաւունքն ապահովել, քանզի Օսմանեան կառավարութիւնն հրովարտակներով, Սահմանադրութեամբ և դաշնադրութեամբ ամեն կերպ իրաւունք տուած է. կը մնայ դանձր գործադրել. այս ալ աշխատութեամբ և ջանքով միայն կրնայ ըլլալ։

Անգղիոյ մէջ՝ Արևելեան խնդրոյ ընկերութիւնն մը կայ, որոյ մասնախորհուրդը Պէրլինի դաշնադրութեան և Անգլիոյ թուրքական պայմանադրութեան վրայ տեղեկագիր մը հրատարակեց։ Այն տեղեկագիրն Հայաստանի վերաբերեալ մասն արժանի կը համարինք հոս առաջ բերել։ «Պէրլինի դաշնադրութեան 61րդ յօդուածը պայման մը կը պարունակէ, որոյ համեմատ Բ. Դուռն յանձն կառնու Հայոց բնակած երկիրներուն մէջ տեղական պիտոյց համաձայն բարենորոգումներ ու բարեօրոգումներ ի գործ դնել, և զանոնք Ձեռքէ ձեռք Բ. Դուռն իւր ձեռք առած միջոցներուն վրայ պարբերական կերպիւ տեղեկութիւն պիտի տայ տէրութեանց, որք անոնց գործադրութեանը պիտի հսկեն։ Այս նպատակին համար բընաւ գործիք պատրաստուած չէ. դաշնադրի տէրութեանց իւրաքանչիւրն իրաւունք ունի Բ. Դրան առաջարկելու որ այս պայմանը գործադրէ, քանզի յօդուածին մէջ բան մը չկայ որ տէրութեանց միաբան գործակցութիւնը պահանջէ։ Կարեւոր և արժան է որոշել թէ Անգղիոյ նկատմամբ դաշնադրութեան այս կէտին և իւր առանձին կերպիւ կրնա՞նք Անգլիո-Օսմանեան պայմանադրութեան միջև եղած յարաբերութիւններն ինչ են։ Միւս հինգ տէրութեանց գաղով, յայտնի է որ Անգլիո-Օսմանեան պայմանադրութեան մէջ բան մը չկայ որ Պէրլինի դաշնադրութեան 61րդ յօդուածով անոնց ստացած իրաւանց դէմ ելնէ։ Այս յօդուածին անգործութեան համար տէրութեանց դանդաղանքներուն չկրնար պատասխան տրուիլ թէ Սուլթանն ինքզինք Անգղիոյ յանձնած է, և թէ գործադրութիւնն արգելիլն Անգլիոյ է և ո՛չ թուրքի։ Եթէ Անգլիո-Օսմանեան պայմանադրութեան աշխարհավարութիւնն ընդունուի, Անգղիա երկրորդ Ասիական պետութիւնն մ'ունեցած պիտի ըլլայ, զոր պէտք է պաշտպանել, բարենորոգել և կառավարել։ Անգղիական պաշտպանութեան Սուլթանին Ասիական հպատակաց վիճակին վրայ ունենալիք ազդեցութեան խնդիրը չկրնար օգտակար կերպիւ վիճարանութեան ենթարկիլ, մինչև որ չգիտցուի թէ ինչ են այն բարե-

նորոգումներն որք ըստ պայմանադրութեան առաջին յօդուածոյն «Անգղիոյ և Բ. Դրան միջև համաձայնութեամբ պիտի որոշուին»։ Իրականապէս կարևորն եղած բանն ո՛չ այնչափ այն թուղթի վրայ գրուած բարենորոգումներն են, որչափ անոնց գործադրութեան եղանակն և ասոր համար ձեռք առնուած ապահովութիւնները։ Կրնայ գիտողութիւն ըլլալ թէ շատ բան կախում պիտի ունենայ Անգղիոյ իւր ձեռնարկին գործադրութեան համար ցոյց տուած ոգիէն և գործածելիք մարդոցմէն։ Եթէ այդ ոգին թուրք պաշտօնատաւաց դեռուանք, Յոյն և Հայ քրիստոնոսէից նկատմամբ կասկած, և նախ Անգղիոյ ենթադրեալ զինուորական շահը նկատողութեան առնելու ետական փափաք մ'ըլլայ, եթէ Սըր Լէյարտի և մեր այժմեան քանի մը հիւպատոսաց նման յանդուգն կողմնակիցներու թող տրուի մեր աշխարհավարութիւնը թուրքիոյ մէջ, կառավարել, ֆրիստոնեայ ժողովուրդը համեմատաբար քիչ բարեւ կրնան սպասել մեր ներկայութեան կամ գործողութեան։

Այս է ահա Անգղիացւոց ազատական մէկ մասին կարծիքն, որք Սըր Լէյարտի և քանի մը հիւպատոսաց ընթացքը խափա կը քննադատեն։ Կրնայ ըսուիլ թէ Սըր Լէյարտ իւր այս աշխարհավարութեան շնորհիւ մեծ կակ կղզի մ'Անգղիոյ վաստկցնելու նպատակ, բայց այսու ամենայնիւ Անգղիոյ վրայ մեծ ամեծ պատասխանաւորութիւններ դրաւ, որոց մէջ կարևոր տեղ մը կը բռնեն փոքր Ասիոյ բարենորոգումներն։ Եթէ այդ բարենորոգումները թուղթի վրայ մնան, ինչ մեծ փառք Անգղիոյ համար։ Այս մասին Սըր Լէյարտի ջանքը տակաւին յաջողութեամբ պսակուած չէ, և պէտք է սպասել որ իւր ներկայացուցած ծրագիրն ընդունուի, հրատարակուի և գործադրի, որպէս զի կարելի ըլլայ անոր վրայ դատողութիւն ընել։ Թան լրագրին Կ. Պոլսոյ թղթակիցը կը պատմէ թէ Սըր Լէյարտ միւս գետպաններէն աւելի կրնայ պաշտար մտնել՝ առանց արարողութեանց պէտք ըլլալու, բայց մըլարէ թէ՛ յաճախ տեսակցութիւնն ապացոյց մը չկրնար ըլլալ մեծ ազդեցութեան կամ համակրութեան, երբ գործով չհաստատուի։ Նոյն թղթակիցը նշանական պատմութիւն մ'աւելցնէ։ Ներկայ Բամազան ամսոյն մէջ Վոսթօրի շոգենաւերէն միոյն վրայ Օսմանեան սպայ մը նստած համրի կը քաշէր, և հաւանականաբար ծով բռնած էր։ Անոր քով Անգղիացի մը նստած կը ծխէր։ Սպային իւր ծովին Անգղիացիէն չյարգուիլ տեսնելով՝ զի՛նք զի՛նք ըսաւ։ Անգղիացին այս բառերը չհասկնալով մեկնու-

թիւնը կը խնդրէր քովին երէն. սպայն զայրանալով ելաւ զայն ծեծեց. և քանզի Անգղիացին գուցէ այնչափ կորով կամ քաջութիւն չունէր, չկորցաւ գիմարել և ծեծը կերաւ թանի թղթակիցը կըսէ թէ շոգենաւերն մէջ անցորդներուն մեծ մասն Յոյն էին, և երբ ինքն անոնց անտարբերութեան վրայ դարմանք յայտնեց, պատասխանեցին. «Այս երկու պարտներն (այսինքն թուրք սպայն և Անգղիացին) իրենք իրենց մէջ Անգլիո-Օսմանեան պայմանադրութիւնը կը գործադրեն, մեզ ինչ փոյթ»։

Իսկիւ պէն մայրաքաղաքիս ֆուռիէ Տ'Օրիան լրագրին գրուած նամակէ մը կը տեսնուի թէ քրիստոնէից վրայ բռնութիւններն ու հարստահարութիւնները միայն Հայաստանի մէջ չեն շարունակել, այլ Եւրոպական թուրքիոյ դաւառաց մէջ ալ, գուցէ առաջուանէն աւելի խստութեամբ։

Ահաւասիկ յիշեալ նամակին տուած տեղեկութիւնները։

«Բամազան մտանք։ Հոս քրիստոնեայ ժողովուրդը կ'սկսին զգալ Պէրլինի Տէրութեանց ժողովին որոշմանց արգելքն, որ կը յայտարարէր թէ ամեն կրօնք ազատ է։ Իսպիւրպի փողոցներուն մէջ իմամ մը կը պըտըտի երկաթածայր գաւազան մ'ի ձեռին, և չարաչար կը հարուածէ բոլոր քրիստոնեայներն ու հրեայներն որոց ծովս քաշելը տեսնէ, և մինչև խանութներուն խորը կը հալածէ։ Եւրոպացի մ'ալ այս երեքը թուրքիոյ ծեծ կերաւ յիշեալ Տէրութիւնէն, և փախչելով շունչը կառավարութեան պաշտօնատունն առաւ, ուր ոստիկանութեան զինուորաց հազարապետին պատմեց զլուռն եկածը։ Իշխանութիւնն ըստ սովորութեան բան մը չըրաւ, այնպէս որ Հրեայ մ'ալ վաճառատան մը մէջ նորէն հարուածեցաւ յիշեալ իմամէն։ Իսպիւրպի բընակալ 50 ի չափ Եւրոպացիք, ծովս քաշելու համար հարկադրեալ են մինչև երկաթուղոյն կայարանին մօտ սրճարան մ'երթալ, և ահում կազմելով ծխել։

«Հնա՛ր է մտածել թէ այսպիսի մոլեռանդ մը կարող ըլլայ իւր հաճոյից համեմատ, ամենուն աչաց առջև, իշխանութեան գիտութեամբն այսպիսի բռնութիւններ ընել բաւական բազմամարդ քաղաքի մը մէջ։ Այս Տէրութիւնն է որ անցեալ տարի ալ քիչ մնաց Գերմանացի Հայապաք մեքենագործը պիտի սպաննէր ծովս քաշելուն պատճառաւ։ Ասկէց կը տեսնուի որ միշտ մի և նոյն դրութիւնն է. ոչ մասնատականաց վիճակին մէջ բարեօրոգում՝ բնաւ չկայ՝ հակառակ դեռապատասխանորդոց, տէրութեանց ժողովոյ, դաշնադրութեանց»։

